

Գյուժրու թիվ 1 ավագ դպրոց

Չետագոտական աշխատանք

Առարկա՝ Տարրական դասարանների մանկավարժություն

Թեմա՝ Ուսուցման տեխնոլոգիաների կիրառումն արդի կրթական համակարգում

Խումբ՝ 3 խումբ

Կատարող՝ Միքայելյան Անի

Ղեկավար՝ Փարկիթյան Անահիտ

Գյուժրի

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----

3

Գլուխ1. Ուսուցման տեխնոլոգիաների կիրառումն արդի կրթական համակարգում:--

5

1.1.Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների նկարագրությունը: -----

5

1.2. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների ընտրությունը-----

13

Եզրակացություն-----

16

Օգտագործված գրականության ցանկ-----17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Աշխատանքային և սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման: Կրթության բնագավառում նորագույն միտումների քննարկումն անհնար է թվում առանց նորագույն տեխնոլոգիաների առկայության: Մանկավարժական տեխնոլոգիան ժամանակակից դիդակտիկայի ուղղություններից է, որն առնչվում է այնպիսի ոլորտների հետազոտություններին, ինչպիսիք են ուսուցման տեխնիկական միջոցների կիրառումը դասավանդման գործընթացում, ուսումնական գործընթացի կառուցման բարելավումը և արդյունավետության բարձրացումը: Մարդկանց սովորելու ունակությունները մեծացնելու և գիտելիքն արդիականացնելու խնդրի առաջնահերթության գիտակցումը, իր հերթին, ենթադրում է մշտական աշխատանք և նշանակալի ներդրումներ երկրի կառավարության կողմից: Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Շարունակական կրթության գաղափարը ներկայիս պայմաններում հնարավոր է իրականացնել, եթե հանրակրթական և բարձրագույն դպրոցները կարողանան արդյունավետ լուծել իրենց առաջադրված՝ կուլտակված փորձը երիտասարդ սերնդին փոխանցելու խնդիրը: Սովորեցնեն տեղեկատվության հետ աշխատելու, նոր գիտելիքների ստեղծման և ամենակարևորը՝ անընդհատ զարգացող աշխարհի մասին գիտելիքների պատշաճ մակարդակի ապահովման մեթոդները:

Չետազոտության նպատակը: Հանրակրթական դպրոցներում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, դրանց առանձնահատկությունների ուսումնասիրության ու արդյունավետ կիրառման բացահայտումն է և դպրոցներում դրանց ներդրման անհրաժեշտության բացահայտումը:

Չետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների առանձնահատկությունները, տեսակները, հումանիտար, տեղեկատվական և հաղորդակցական, ինտերակտիվ, անձնային կողմնորոշման տեխնոլոգիաները:
2. Հետազոտել ժամանակակից մեթոդների կիրառությունը հանրակրթական դպրոցներում:

Գլուխ 1 Ուսուցման տեխնոլոգիաների կիրառումն արդի կրթական համակարգում

1.1. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների նկարագրությունը

Ուսուցման **տեխնոլոգիան** (հունարեն technē՝ արվեստ, արհեստ, հմտություն և logy՝ գիտություն) աշխատանքի գիտական կազմակերպման առավել արդյունավետ մեթոդների ամբողջությունն է, որոնց շնորհիվ ուսուցման առջև դրված նպատակներին հնարավոր է լինում հասնել կարճ ժամանակահատվածում և նվազագույն միջոցներ ծախսելով: Տերմինը գործածվել է 21-րդ դարի երկրորդ կեսի գրականության մեջ՝ կապված ծրագրային ուսուցման զարգացման հետ և նախնական շրջանում օգտագործվել է տեխնիկական միջոցների կիրառմամբ ուսուցումը սահմանելու համար:

Մանկավարժական տեխնոլոգիա տերմինը գործածության մեջ է դրվել 20-րդ դարի 60-ական թվականներին՝ լեզվադիդակտիկ գրականության մեջ, կապված ուսուցման զարգացման հետ և սկզբնական շրջանում մեկնաբանվել է որպես ուսուցում՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ: 70-ական թվականներին հասկացության մեկնաբանությունն ընդլայնվել է և իր մեջ է ներառել նաև դիդակտիկայի գրեթե բոլոր հիմնական խնդիրները, որոնք ուղղված էին ուսումնական գործընթացի բարելավմանը: Մեր օրերում տերմինի երկու բաղադրիչները տարբերակվել են՝ ուսուցման տեխնոլոգիա (Technology of Teaching), որպես ուսուցչի աշխատանքային մեթոդների ամբողջություն, որն ապահովում է ուսուցման առջև դրված բոլոր նպատակների իրագործումը և կազմում է նրա աշխատանքի գիտական կազմակերպման հիմքը, և տեխնոլոգիաներն ուսուցման մեջ (Technology in Teaching), այսինքն տեխնիկական միջոցների կիրառումը ուսուցման գործընթացում: Առաջին տերմինի միջոցով սահմանվում են ուսուցչի աշխատանքի գիտական կազմակերպման մեթոդները, որոնց շնորհիվ լավագույն կերպով իրականացվում են ուսուցման առջև դրված նպատակները: Իսկ երկրորդ տերմինը սահմանում է տեխնիկական միջոցները և դրանց կիրառումը ուսուցման գործընթացում: Տեխնիկական ուսուցման ամենակարևոր բնութագրերն են.

1) արդյունավետությունը (յուրաքանչյուր սովորողի առջև դրված նպատակին հասնելու բարձր մակարդակ), տնտեսումը (ժամանակի մեկ միավորի ընթացքում առավել մեծ ծավալով նյութի յուրացում),

2) էրգոնոմիկա (ուսուցումը տեղի է ունենում համագործակցության, փոխօգնության, դրական միջավայրում, ծանրաբեռնվածության և հոգևածության բացակայության դեպքում),

3) առարկան յուրացնելու բարձր մոտիվացիա, ինչը մեծացնում է հետաքրքրվածությունը պարապմունքների նկատմամբ և թույլ է տալիս բացահայտել սովորողի թաքնված կարողությունները: Շատ հետազոտողներ տեխնիկական ուսուցումը դիտարկում են որպես պարապմունքների ընթացքում սովորողի անձնային հմտությունների բացահայտման կարևորագույն միջոց, որի շնորհիվ սովորողները հանդես են գալիս որպես ուսումնական գործընթացի ակտիվ ստեղծագործական սուբյեկտներ:¹

Լեզվադիդակտիկայում տեխնիկական ուսուցումն շարքին են դասվում համագործակցային ուսուցումը, նախագծային տեխնոլոգիան (նախագծերի մեթոդ), ուսանողակենտրոն ուսուցումը, տանդեմ մեթոդը, «Case Study» տեխնոլոգիան, հեռակա ուսուցումը, համակարգչային տեխնիկան, ինտենսիվ տեխնոլոգիաները, օտար լեզուների տիրապետման տեխնոլոգիան, խաղային տեխնոլոգիան և այլն:

Շատ հետազոտողներ կրթական տեխնոլոգիաները դիտարկում են ուսուցչի աշխատանքի գիտական կազմակերպման տեսանկյունից (Շ. Ա. Ամոնաշվիլի, Ն. Ֆ. Տալիգինա, Վ. Ա. Սլաստյոնին): Լեզուների դասավանդման մեթոդիկայում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների շարքին են դասվում, մասնավորապես, նախագծերի մեթոդը (նախագծային տեխնոլոգիա), համագործակցային ուսուցումը, աշակերտակենտրոն ուսուցումը, ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործումը:

Տեխնոլոգիա(հունակարեն techné`արվեստ, հմտություն, կարողություն և logy` գիտություն) հումքի, նյութերի ձեռք բերման, մշակման և վերամշակման միջոցների և մեթոդների ամբողջություն: Մանկավարժական տեխնոլոգիան «պարզապես ուսուցման գործընթացում տեխնիկական միջոցների կամ համակարգիչների օգտագործման հետազոտություն չէ, այն ենթադրում է այնպիսի հետազոտություններ, որոնք ուղղված են ուսուցման գործընթացի օպտիմալացման սկզբունքների բացահայտմանը և նոր միջոցների մշակմանը, իսկ դրանք էլ

¹ <https://pedtecho.ru/content/tehnologiya>

իրականացվում են կրթական արդյունավետությունը բարձրացնող գործոնների վերլուծության և կիրառվող մեթոդների գնահատման միջոցով»:²

Տեխնոլոգիան որևէ աշխատանքի, վարպետության կամ արվեստի մեջ օգտագործվող մեթոդների ամբողջությունն է (բացատրական բառարան):³

Կան **«մանկավարժական տեխնոլոգիա»** հասկացության տարբեր սահմանումներ.

Մանկավարժական տեխնոլոգիան հոգեբանական և մանկավարժական սահմանումների ամբողջությունն է, որոնք սահմանում են ուսուցման ձևերի, տեսակների, մեթոդների, միջոցների հատուկ հավաքածուները և դրանց դասակարգումը: Այն մանկավարժական գործընթացի կազմակերպչական և մեթոդաբանական գործիքակազմն է (Բ. Տ. Լիխաչով):

Մանկավարժական տեխնոլոգիան կրթական գործընթացի իրականացման բովանդակալից մեթոդ է (Վ. Պ. Բեսպալկո):

Մանկավարժական տեխնոլոգիան ուսումնառության պլանավորված արդյունքներին հասնելու գործընթացի նկարագրությունն է (Ի. Պ. Վոլկով):

Տեխնոլոգիան մանկավարժի արվեստն է, նրա հմտությունը, որը թույլ է տալիս նրան փոփոխել իրավիճակն ու դրությունը (Վ. Մ. Շեպել):

Ուսուցման տեխնոլոգիան դիդակտիկ համակարգի բաղադրիչ ընթացակարգային մաս է (Մ. Չոշանով):

Մանկավարժական տեխնոլոգիան ուսումնական գործընթացի նախագծման, կազմակերպման և անցկացման համար մանրակրկիտ մտածված համատեղ մանկավարժական գործունեության մոդել է, որն ապահովում է սովորողի և դասավանդողի համար հարմարավետ պայմաններ՝ ուսուցման ողջ գործընթացում (Վ.Մ.Մոնախով):

Մանկավարժական տեխնոլոգիան ուսուցման և գիտելիքների յուրացման ամբողջ գործընթացի ստեղծման, կիրառման և սահմանման համակարգված մեթոդ է, որը հաշվի է առնում տեխնիկական ու մարդկային ռեսուրսները, դրանց համագործակցությունը, որի նպատակն է օպտիմալացնել ուսուցման տեսակները (ՅՈՒՆԵՍԿՕ):

Մանկավարժական տեխնոլոգիան իրենից ներկայացնում է մանկավարժական նպատակներին հասնելու համար օգտագործվող բոլոր անհատական, գործիքային և

² Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման գործընթացի տեխնոլոգիականությունը բարձրագույն դպրոցում, Մխիթար Գոշ, N1, 2007, էջ 48

³ <https://nsportal.ru/blog/shkola/obshcheshkolnaya-tematika/all/2011/11/04/sovremennye-pedagogicheskie-tekhnologii>

մեթոդական գործիքների համակարգային ամբողջականությունը և կարգը (Մ.Վ. Կլարին):⁴

Ընդհանրացնելով բոլոր սահմանումները կարելի է ասել որ, «մանկավարժական տեխնոլոգիա» մանկավարժի գործունեության այնպիսի կառուցում է, որի մեջ մտնող գործողությունները ներկայացված են որոշակի հաջորդականությամբ և ամբողջության մեջ, իսկ դրա իրականացումը ենթադրում է անհրաժեշտ արդյունքներին հասնելու պահանջ և օժտված է կանխատեսող բնույթով: «Մանկավարժական տեխնոլոգիա» հասկացության հատկանշական գծերն են համարվում.

- ✓ կոնկրետ մանկավարժական մտահաղացումների մշակումը արժեքային կողմնորոշումների հիմքի վրա.
- ✓ մանկավարժական գործողությունների տեխնոլոգիական շղթայի այնպիսի կառուցումը, որ այն համապատասխանի դպրոցական նվաճումներին և պետական կրթական չափորոշիչներին և ապահովի յուրացման անհրաժեշտ մակարդակ.
- ✓ ուսուցչի և աշակերտի փողկապակցված գործունեությունը՝ կախված աշակերտի ուսումնական պահանջմունքներից և համապատասխան յուրաքանչյուրի անհատական առանձնահատկություններին.
- ✓ կանխատեսող պրոցեդուրաներ, որոնք պարունակում են չափանիշներ, ցուցանիշներ և գործողություններ՝ գործունեության արդյունքը որոշելու համար.⁵

Կրթության մեջ ժամանակակից տեխնոլոգիաները դիտվում են որպես կրթական նոր հարացույցի իրականացման միջոց: Մանկավարժական տեխնոլոգիաների զարգացման միտումները ուղղակիորեն կապված են կրթության մարդասիրացման, անձի ինքնակատարելագործման, ինքնարդարացման և ինքնիրացման հետ: Կրթական տեխնոլոգիաներ տերմինը ավելի լայն է, քան ուսուցման տեխնոլոգիան, քանզի ենթադրվում է, որ այն ներառում է նաև ուսումնառողների անձնային որակների ձևավորման և զարգացման հետ կապված դաստիարակչական տեսանկյունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստաթղթերում կրթական տեխնոլոգիաները դիտարկվում են որպես մարդկային և տեխնիկական ռեսուրսների ու նրանց փոխներգործության հաշվառմամբ ուսուցման և գիտելիքների յուրացման ամբողջ գործընթացի

⁴ <https://nsportal.ru/blog/shkola/obshcheshkolnayatematika/all/2011/11/04/sovremennye-pedagogicheskie-tekhnologii>

⁵ Պետրոսյան Հ. Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012 էջ 12

ստեղծման, կիրառության և սահմանման համակարգային մեթոդ:⁶ Տեխնոլոգիայի այս սահմանումը, ինչպես նաև նմանատիպ բազմաթիվ սահմանումներ, չեն կարող հավակնել լինել ամբողջական և ստույգ, քանի որ անընդհատ հայտնվում են նոր տեղեկատվական, էկոլոգիական, տիեզերական տեխնոլոգիաներ:

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների դասակարգումն իրականացվում է ըստ տարբեր չափորոշիչների:

Ըստ գործածության ոլորտների՝ տեխնոլոգիաները լինում են՝ ընդհանուր-մանկավարժական, մասնավոր առարկայական, մոդուլային: Ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիաները բնութագրվում են մանկավարժական գործընթացի ամբողջական ընդգրկմամբ: Մասնավոր-առարկայական տեխնոլոգիաները իրենցից ներկայացնում են այն բոլոր միջոցների ու ձևերի ամբողջությունը, որոնցով իրագործվում են ուսումնական բովանդակությունը: Մոդուլային տեխնոլոգիաները գործառվում են ուսումնական գործընթացի տարբեր հատվածներում:

Ըստ կառուցվածքի և բովանդակության՝ տեխնոլոգիաները լինում են՝ ուսուցանող, դաստիարակող, աշխարհիկ, կրոնական, ընդհանուր-կրթական, մասնագիտական, պոլիտեխնիկական, ներթափանցող և այլն:

Ըստ կազմակերպման ձևերի՝ տեխնոլոգիաները լինում են՝ դաս-դասարանային, այլընտրանքային, ակադեմիական, ակումբային, խմբային, կոլեկտիվ ուսուցման, տարբերակված կրթության և այլն:

Ըստ երեխաների նկատմամբ կիրառվող մոտեցումների՝ տեխնոլոգիաները լինում են՝ **ավտորիտար, համագործակցային, ազատ դաստիարակության, անձնային կողմնորոշում ունեցող, մարդկային-անհատական** և այլն: Ավտորիտար տեխնոլոգիաներում մանկավարժը հանդիսանում է ուսումնադաստիարակչական գործընթացի միահեծան սյուրբեկտ, իսկ աշակերտը գտնվում է ուսումնադաստիարակչական գործընթացի օբյեկտի վիճակում: Այսպիսի տեխնոլոգիաները աչքի են ընկնում դպրոցական կյանքի խստիվ կանոնակարգմամբ, պահանջներով և պարտադրանքներով, որոնք ճնշում են սովորողի ինքնուրույնությունը:

Համագործակցային տեխնոլոգիաները աչքի են ընկնում ժողովրդավարության, հավասարության սկզբունքներով, ուսուցիչ աշակերտ փոխհարաբերություններում սուբյեկտ-սուբյեկտ հարաբերությաունների գերակշռմամբ: Ուսուցիչն ու աշակերտը գտնվում են համագործակցության մեջ, որը հետապնդում է գործունեության ընդհանուր նպատակներ և բովանդակություն:

⁶Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012, էջ 13

Ազատ դաստիարակության տեխնոլոգիաները երեխային ընձեռնում են ընտրության, ինքնուրույնության դրսևորման հնարավորություն:⁷

Մարդկային-անհատական տեխնոլոգիաները վերաբերվում են հոգեբանավերականգնողական մանկավարժությանը՝ ուղղված հոգեբանական անձին օգնություն ցուցաբերելու հիմնախնդրին:

Անձնային կողմնորոշում ունեցող տեխնոլոգիաները հանրակրթության հիմքում դնում են երեխայի անձը, նրա անձի զարգացման համար համապատասխան պայմանների ապահովումը: Անձնային կողմնորոշում ունեցող մանկավարժական տեխնոլոգիաներն իրենց հերթին լինում են՝ տեղեկատվական, ինքնազարգացնող, էվրիստիկական, գործառնական, կիրառական:

Տեղեկատվական տեխնոլոգիաները իրագործում են սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Գործառնական տեխնոլոգիաների խնդիրն է՝ մտածողության խթանումը:

Կիրառական տեխնոլոգիաները ապահովում են անձի գործնական կարողությունների ձևավորումը:

Ինքնազարգացնող տեխնոլոգիաները ուղղված են անձի որակների ինքնակառավարման մեխանիզմների ձևավորմանը, իսկ էվրիստիկական տեխնոլոգիաները զարգացնում են երեխայի ստեղծագործական ընդունակությունները:⁸

Ինտերակտիվ են այն տեխնոլոգիաները, որոնց կիրառման ժամանակ սովորողը ուսուցանող համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող սուբյեկտիվ-օբյեկտիվ հարաբերություններում, պարբերաբար դառնալով նրա ինքնավար ակտիվ տարրը: Զննարկենք ինտերակտիվ տեխնոլոգիաների կազմակերպման առանձնահատկությունները, նրանց կոնցեպտուալ դիրքորոշումը և նպատակային կողմնորոշումները:

Ինտերակտիվ ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ: Պասիվ մոդելի առանձնահատկությունը ուսուցանող միջավայրի ակտիվությունն է: Դա նշանակում է, որ աշակերտները յուրացնում են նյութը ուսուցչի խոսքից կամ դասագրքի տեքստից, չեն շփվում միմյանց հետ և չեն կատարում ոչ մի ստեղծագործական առաջադրանք: Այսպիսի մոդելի օրինակներ են դասերի ավանդական ձևերը: Ակտիվ մոդելը խթանում է

⁷ Գևորգյան Լ.Վ., Ժամանակակից մանկավարժական ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները, Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, Գյումրի, 2015, էջ 76

⁸ Գևորգյան Լ.Վ., Սովորողների ճանաչողական ակտիվությունը խթանող մանկավարժական տեխնոլոգիաներ, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Նվիրվում է 1988թ. Դեկտեմբերի 7-ի երկրաշարժի 20-րդ տարելիցին, Գյումրի, «Դպիր», 2009, էջ 243

սովորողների իմացական գործունեությունը և ինքնուրույնությունը: Այս մոդելը նախապայման ունի ստեղծագործական առաջադրանքների (ավելի հաճախ՝ տնային) առկայությունը և պարտադիր շփումը աշակերտ-ուսուցիչ համակարգում: Այս մոդելի թերությունն այն է, որ սովորողները հանդես են գալիս որպես ուսուցման սուբյեկտ միայն իրենց համար և կրթական գործընթացում փոխգործակցում են լոկ ուսուցչի հետ: Այսպիսով, այս մոդելին բնորոշ է միակողմանի ուղղվածությունը, այսինքն՝ միայն ինքնուրույն գործունեության, ինքնուսուցման, ինքնադաստիարակության, ինքնագարգացման տեխնոլոգիաներ: Ինտերակտիվ մոդելն իր առջև նպատակ է դնում կազմակերպել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտիվ մոդելի միայն տարրեր՝ ինտերակտիվ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որնք թույլ են տալիս դարձնել դասն անսովոր և ավելի հագեցած ու հետաքրքիր: Չնայած կարելի է անցկացնել ամբողջապես ինտերակտիվ դասեր:

Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, որոնք բնութագրվում են հետևյալ դասակարգման բնութագիչներով.

- իմաստասիրական հիմքը՝ հումանիստական, բնանպատակահարմար:
- մեթոդաբանական մոտեցումը՝ հաղորդակցական:
- զարգացման առաջատար գործոնները՝ սոցիոծին:
- ուսումնա-դաստիարակչական գործընթացի կառավարման տեսակը՝ ուղեկցում:
- ուսումնա-դաստիարակչական գործընթացի կառավարման տիպը՝ փոխուսուցում:
- գերակշռող մեթոդները՝ տրամախոսական:
- կազմակերպչական ձևերը՝ ցանկացած:⁹

Մոտեցումը երեխային և դաստիարակչական փոխազդեցության բնույթը՝ ինտերակտիվ, ժողովրդավարական, համագործակցային: Ինտերակտիվ

⁹ Подласый И.П. Педагогика. Новый курс: учебник для студ.пед.вузов. — М.: ВЛАДОС, 1999. — Кр. 1: Общие основы. Процесс обучения. — 576 с.:

տեխնոլոգիաները հիմնված են ուսումնական շրջապատի հետ սովորողների ուղղակի փոխազդեցության վրա: Ուսումնական շրջապատը հանդես է գալիս որպես իրականություն, որում սովորողնիր համար գտնում է յուրացվող փորձի ոլորտ: Սովորողի փորձը ուսումնական իմացման գլխավոր ակտիվացնողն է: Ավանդական ուսուցման ժամանակ ուսուցիչը խաղում է ուսումնական տեղեկությունն իր միջով անցկացնող «գտիչի» դեր, ինտերակտիվ ժամանակ՝ աշխատանքում օգնականի դերով ակտիվացնում է տեղեկությունների փոխուղղված հոսքերը: Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ. Նրա ակտիվությունն իր տեղն է գիջում սովորողների ակտիվությանը, ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարևոր չէ ուսուցչի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Իրազեկիչ-փորձագետի դերում ուսուցիչը շարադրում է տեքստային նյութը, ցուցադրում տեսաշարքը, պատասխանում մասնակիցների հարցերին, հետևում է գործընթացի արդյունքներին և այլն: Կազմակերպիչ-ֆասիլիտատորի դերում նա կազմակերպում է սովորողների փոխգործակցությունը սոցիալական և ֆիզիկական շրջապատի հետ (բաժանում է խմբերի, խթանում է նրանց ինքնուրույն տվյալներ հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը, մինի շնորհանդեսների նախապատրաստումը և այլն): Խորհրդատուի դերում ուսուցիչը դիմում է աշակերտների մասնագիտական փորձին, օգնում է գտնել արդեն ձևակերպված խնդիրների լուծումը, ինքնուրույն ձևակերպել նորերը և այլն: Կազմակերպչի դերի թերություններից է նախապատրաստության ժամանակ ուսուցչի գործի աշխատատարությունը, արդյունքների ճշգրիտ պլանավորման բարդությունը:

Ինտերակտիվ ռեժիմի ժամանակ արգելքների աղբյուր կարող է լինել ընկալման տարբերությունը, որի պատճառով չի բացառվում իմաստի փոփոխությունը տեղեկատվության ծածկագրման և գաղտնագերծման գործընթացներում:

Ինտերակտիվ տեխնոլոգիաներ և մեթոդներ

Ծանոթանանք մի քանի ինտերակտիվ տեխնոլոգիաների և մեթոդների, որոնց միջոցով կարելի է ուսուցման ինտերակտիվ մոդելներ դնել դասի շրջանակներում՝

- աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով, ռոտացիոն եռյակներով, «երկու, չորս, միասին»
- կարուսելի մեթոդ
- դասախոսություններ հիմնախնդրային շարադրանքով
- Էվրիստիկական գրույց
- դաս-սեմինարներ (բանավեճերի, մտքերի փոխանակության ձևաչափով)
- կոնֆերանսներ
- գործարար խաղեր
- մուլտիմեդիայի միջոցների օգտագործում (համակարգչային դասարաններ)
- լիարժեք համագործակցության տեխնոլոգիա
- մոդելավորման տեխնոլոգիական նախագծերի մեթոդ:

Կրթական գործընթացի մարդասիրական սկզբունքը պահանջում է վերանայել ուսուցման ողջ բովանդակությունը, այսինքն՝ ճանաչել յուրաքանչյուր երեխայի անձի ստեղծագործ բնույթը:¹⁰ Գլխավոր նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է: Իսկ անհատի զարգացման միջոցը, որը բացահայտում է նրա ներուժակ ներքին ընդունակությունները, ինքնուրույն իմացական և մտավոր գործունեությունն է: Հետևաբար, ուսուցչի խնդիրն է դասի ժամանակ ապահովել այնպիսի գործունեություն, որին նպաստում են ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաները: Այս դեպքում աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին: Գիտելիքների յուրացումը նրա գործունեության արդյունքն է: Հայրենական հետազոտող մեթոդիստների շրջանում խորանում է ուսուցման իդեալականացված մոդելի ստեղծման անհրաժեշտության գիտակցումը, որում ուսուցման էությունը չի հանգեցվի ո՛չ սովորողներին պատրաստի գիտելիքների հաղորդմանը, ո՛չ դժվարությունների ինքնուրույն հաղթահարմանը, ո՛չ էլ սովորողների սեփական հայտնագործություններին: Նրան մյուսներից տարբերում է դպրոցականի սեփական նախաձեռնության, ինքնուրույնության, ակտիվության հետ մանկավարժական ղեկավարման խելամիտ զուգակցումը: Ուսուցման միայն

¹⁰Селевко Г.К. Педагогические технологии на основе активизации, интенсификации и эффективного управления УВП. М.: НИИ школьных технологий, 2005.

այդպիսի մոդելը, որը հենվում է իմացական գործունեության նպատակների ու դրդապատճառների, ուսուցման մեխանիզմների մասին արդի գիտելիքների ամբողջության վրա, պիտանի կլինի գլխավոր նպատակի՝ անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, իրականացման համար:

1.2. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների ընտրությունը

Դպրոցը եղել և մնում է նպատակամիտված դեպի գիտական գիտելիքների յուրացումը, որը ներկայացված է ծրագրերում, դասագրքերում ու ձեռնարկներում: Ուսուցիչը առաջատար դիրքում է: Իսկ աշակերտը շարունակում է մնալ որպես ուսուցման ակամա սուբյեկտ: Վերջին տարիներին մանկավարժները ձգտում են շրջվել դեպի աշակերտը՝ ներդնելով անձնային կողմնորոշման և մարդկային-անհատական մոտեցումները, որոնք կարող են նույնիսկ հանգեցնել մանկական եսասիրության, մաքսիմալիզմի և փառասիրության դրսևորմանը:

Արդի պայմաններում ոչ մի տեխնոլոգիա չի կարող ունիվերսալ հանդիսանալ, քանի որ ծավալուն մանկավարժական համակարգերը չեն կաող լինել միատեխնոլոգիա, այսինքն՝ կիրառել միայն մեկ տեսակի տեխնոլոգիա բոլոր դասարանների և առարկաների համար: Այնինչ պոլիտեխնոլոգիզմը անխուսափելի է ուսուցման գործընթացում, որովհետև գոյություն ունեն բազմաթիվ ազդակներ, որոնք ներգործում են ուսուցման արդյունավետության վրա:

Յուրաքանչյուր մանկավարժ տեխնոլոգիայի ստեղծող է: Տեխնոլոգիայի գաղափարը անհնարին է իրագործել առանց ստեղծագործական մոտեցման:

Անձնային կողմնորոշում ունեցող ուսուցման տեխնոլոգիաները

Անձնային կողմնորոշում ունեցող ուսուցման համակարգում կարելի է առանձնացնել հետևյալ տեխնոլոգիաները՝ տարբերակված ուսուցման, կոլեկտիվ փոխուսուցման, համագործակցային, մոդուլային ուսուցման:

Տարբերակված ուսուցման տեխնոլոգիա

Ուսուցման այս տեխնոլոգիայի տեսական հիմքը խարսխվում է սովորողների անհատական ընդունակությունների հաշվառման և ըստ այդմ այն ժամանակահատվածի ընտրության վրա, որը հարկավոր է յուրաքանչյուր

աշակերտին՝ ուսումնական նյութը յուրացնելու համար: Ուսումնասիրվել են սովորողների հնարավորություններն այնպիսի պայմաններում, երբ նյութը յուրացնելուն հատկացված ժամանակահատվածը սահմանափակված չի եղել: Եվ առանձնացվել են հետևյալ որակները.

- ✓ սակավ օժտվածներ, որոնք ի վիճակի չեն հասնելու գիտելիքների յուրացման նախանշված մակարդակին անգամ ժամանակի մեծ կորստի դեպքում,
- ✓ տաղանդավորներ, օժտվածներ /մոտ 5%/, որոնք արագորեն յուրացնում են այն, ինչը մյուսների համար անհասանելի է,
- ✓ սովորողներ, որոնք մեծամասնությունն են կազմում /մոտ 90%/, որոնց՝ գիտելիքները յուրացնելու մակարդակը պայմանավորված է ուսումնական ժամանակի ծախսով:¹¹

Եթե յուրաքանչյուր երեխայի հատկացվի իրեն անհրաժեշտ ժամանակը, որը համապատասխանում է իր հնարավորություններին և ընդունակություններին, ապա հնարավոր կլինի ապահովել ուսումնական ծրագրի հիմնական հատվածը: Սա իրականացնելու համար հարկավոր է ունենալ տարբերակված մակարդակի դպրոցներ, որոնցում աշակերտների հոսքերը բաժանվում են շարժական կազմով խմբերի, որոնք յուրացնում են ուսումնական նյութը մինիմալ /պետական ստանդարտներին, չափորոշիչներին համապատասխան/, բազային և տարբերակային /ստեղծագործական/ մակարդակներով:

Դպրոցի այսպիսի մոդելը իր մեջ ներառում է տարբերակված ուսուցման 3 տեսակներ.

1. դասարանների կոմպլեկտավորումը՝ սկսած տարրական օղակից՝ հենվելով անձի զարգացման դինամիկայի բնութագրերի վրա,
2. ներդասարանական տարբերակվածություն, որը նախատեսում է դասարանի կազմում /հատկապես միջին օղակում/ տարբեր մակարդակի խմբերի առանձնացում:
3. հիմնական դպրոցում պրոֆիլային ուսուցումը՝ հենված փսիխոդիագնոստիկային /հոգեբանական կանխատեսմանը/, փորձարարական գնահատականին, ուսուցիչների և ծնողների հանձնարարականներին:¹²

Կոլեկտիվ փոխուսուցման տեխնոլոգիա

Այս տեխնոլոգիան ունի մի քանի անվանումներ՝ 'կազմակերպված

¹¹ Էլեկտրոնային դասախոսություններ

¹² Унш И.Э. Индивидуализация и дифференциация обучения. М., 1990

երկխոսություն, փոփոխական կազմերով զույգերի աշխատանք: Այս տեխնոլոգիայով աշխատելու ժամանակ օգտագործում են զույգերի երեք տեսակներ՝ ստատիկ, դինամիկ, տարբերակային:

Ստատիկ զույգ: Այս դեպքում ըստ ցանկության միավորվում են երկու աշակերտներ, որոնք հերթով կատարում են ուսուցչի և աշակերտի՝ սովորողի և սովորեցնողի դերը: Այսպես կարող են աշխատել կամ երկու թույլ աշակերտները, կամ երկու ուժեղները, կամ էլ մեկ ուժեղ և մեկ թույլ աշակերտը, եթե նրանք հոգեբանորեն համատեղելի են:

Դինամիկ զույգ: Ընտրում են չորս աշակերտների և նրանց առաջադրանք հանձնարարում: Իր բաժին առաջադրանքն ավարտելուց հետո աշակերտներից յուրաքանչյուրը այն քննարկում է երեք անգամ՝ իր ընկերներից ամեն մեկի հետ առանձին: Ընդ որում ամեն անգամ աշակերտին հարկավոր է նորովի շարադրել սեփական միտքը, շարադրանքի տրամաբանությունը, այնպես, որ այն հասկանալի լինի իր ընկերներին, համապատասխան նրանցից յուրաքանչյուրի անհատական առանձնահատկություններին ու ընդունակություններին:

Ուսուցումը թիմում: Առաջադրվում է խմբային նպատակ: Հաջողության կարելի է հասնել միայն թիմի բոլոր անդամների անընդհատ փոխհարաբերության շնորհիվ, երբ բոլորը աշխատում են թեմայի, հիմնախնդրի կամ հարցի լուծման վրա: Խնդիրն նրանում է, որ որ թիմի յուրաքանչյուր անդամ պիտի տիրապետի հարկավոր ու անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, ընդ որում ամբողջ թիմը տեղյակ է յուրաքանչյուրի ձեռքբերումներին:

Խմբային գործունեության գնահատականը կախված է աշխատանքի ձևերից և դիդակտիկական նպատակներից: Բոլոր խմբերի՝ առաջադրանքը կատարելուց հետո, ուսուցիչը առաջադրում է ստուգիչ թեստ՝ նոր նյութի յուրացման աստիճանը պարզելու համար: Թեստի պահանջները մասնակիցները կատարում են ինքնուրույն: Երբ խմբերը վերջացնում են աշխատանքը, գնահատվում է յուրաքանչյուրի կատարածը, իսկ ամբողջ խումբը ստանում է մեկ գնահատական: Սա նպատակ ունի խթանելու ընկերոջը օգնելու պատրաստակամությունը:

«Սոնգ»: Մասնակիցները բաժանվում են 4-6 հոգուց կազմված խմբերի: Ուսումնական նյութը բաժանվում է մասերի: Խմբի յուրաքանչյուր անդամ կատարում է աշխատանքի իր բաժինը: Այնուհետև մասնակիցները, որոնք ուսումնասիրում են միևնույն նյութը և գտնվում են տարբեր խմբերում, հանդիպում են և քննարկում իրենց յուրացրած ինֆորմացիան որպես փորձագետներ: Տեղի է ունենում, այսպես կոչված, փորձագետների հանդիպում:

Այնուհետև նրանք վերադառնում են իրենց խմբերը և սովորեցնում խմբի մյուս

անդամներին այն նորը, որի մասին տեղեկացել են իրենք: Խմբի բոլոր անդամները իրենց հերթին տեղեկություններ են հաղորդում առաջադրանքի իրենց բաժնի վերաբերյալ /ինչպես սղոցի ատամները/: Քանի որ ուսումնական նյութը յուրացնելու միակ ճանապարհը իր խմբի անդամներին ուշադիր լսելն ու տեսողում գրառումներ կատարելն է, ուսուցիչի կողմից այլևս կողմնակի ոչ մի ներգործության կարիք չկա: Մասնակիցները շահագրգռված են, որ իրենց ընկերները բարեխղճորեն կատարեն առաջադրանքները, որովհետև յուրաքանչյուրի պատրաստվածությունը ազդում է խմբի ընդհանուր գնահատականի վրա: Վերջնական փուլում ուսուցիչը կարող է խնդրել խմբի ցանկացած անդամի՝ պատասխանելու ցանկացած հարցի, որ վերաբերում է ուսումնասիրված, յուրացված նյութին:

«Սովորում ենք միասին»: Դասարանը բաժանվում է հավասար մակարդակների խմբերի՝ բաղկացած 3-5 մասնակիցներից: Յուրաքանչյուր խումբը ստանում է մեկական առաջադրանք, որը կազմում է մի մեծ թեմայի կամ նյութի բաղկացուցիչ մասը: Առանձին խմբերի և ամբողջ դասարանի ընդհանուր աշխատանքի արդյունքում յուրացվում է ամբողջական նյութը:

Խմբի ներսում մասնակիցներն իրենք են որոշում յուրաքանչյուրի դերը ընդհանուր առաջադրանքը կատարելու համար: Խումբը լուծելու է երկու խնդիրներ՝ ստեղծագործական-իմացական նպատակի հասնելու ձգտում և համատեղ գործունեության կազմակերպում ու հաղորդակցման որոշակի մշակույթի ձևավորում: Խումբը մրցանակներ է ստանում՝ կախված յուրաքանչյուր աշակերտի հաջողության աստիճանից:

Փոքր խմբերով աշխատանքի կազմակերպման հիմնական գաղափարը, որը բնորոշ է վերը նշված բոլոր տեխնոլոգիաներին, նպատակների և խնդիրների ընդհանրությունն է, անհատական պատասխանատվության առկայությունը և հավասար հնարավորությունների ստեղծումը՝ հաջողության հասնելու համար:

Այն ուսուցչին, որը փորձում է իրագործել համագործակցության տեխնոլոգիաները, հարկավոր է.

1. Ճիշտ տեղաբաշխել դասարանում երեխաների տեղերը, այնպես, որ նպաստավոր և հարմար պայմաններ ստեղծվեն զույգերով կամ փոքր խմբերով աշխատելու համար:
2. Կարողանալ դասարանը բաժանել խմբերի՝ հնրավորություններ ընձեռնելով յուրաքանչյուրին՝ ինքնուրույնաբար որոշելու իր կատարելիք դերն ու աշխատանքը:
3. Աշակերտին ընկերոջ հետ քննարկման և աշխատանքները փոխադարձաբար ստուգելու հնարավորություն տալ նախքան

ստուգողական առաջադրանքի կամ թեստի վերջնական ամփոփումը:

4. Հենց դասի սկզբից և խմբային աշխատանքից առաջ հստակորեն ձևակերպել առաջադրանքի նպատակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Ուսուցման տեխնոլոգիաների կիրառումն արդի կրթական համակարգում» թեման հանգեցինք հետևյալ եզրակացությանը, որ մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացման համար օգտագործել մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաները, որոնք պետք է համապատասխանեն դպրոցական նվաճումներին և պետական կրթական չափորոշիչներին և յուրացման անհրաժեշտ մակարդակին:

Ներկայում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումն ինդիվիդուալ հետ կապված խորացնել մասնագետների տեսական ու գործնական իմացությունը: Կարևորելով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների ներդրումը հանրակրթական դպրոցում սաների մոտ ձևավորել բազմակողմանի մտածողություն, ուշադրություն ստեղծագործական կարողությունների զարգացում և տրամաբանություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան Ս.Բ., Կոմպյուտերային տեխնոլոգիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում, Երևան, «Թասկ» ՍՊԸ, 2010
2. Մանուկյան Ս., Նպատակահարույց ուսուցման տեսությունն ու պրակտիկան, Երևան, 1998
3. Մանուկյան Ս., Մանկավարժություն, Երևան, 2000
4. <https://pedtehn.ru/content/tehnologiya>
5. <https://nsportal.ru/blog/shkola/obshcheshkolnayatematika/all/2011/11/04/sovremennye-pedagogicheskie-tehnologii>